

73. ԴԵՐԻՆ ՍԱՄԵՆ

Մին շենում մին դեր ար ապրում։ Տա վարն ըսկըսելան առաջ նոքյար ար վըռնում. հանդին պենն անել տամ։ Դերին խասյաթը շատ փիս ար, հինչ նոքյար վըեր կյամ ար տրա կոշտը, էրկու օրա իվիլ կենում չար, առանց հախը յոր ունելի փախճում ար։

Մին օր մին մարթ քյինամ ա, էտ դերին կոշտը, ասում.— Ինձ նոքյար եր կալ, հիշքան օղում ըս, պինըցրու, համմա մըեր մաչին պայման տինինքյ՝ հինչ պըտահե, ուրուշու տոռնը կյենգյատ չի քյինանք։ Դերն ասում ա.— էտ լիհա ես ըմ օղում։

Ըռութանան վըեր ծաքյին քըեթը պռատվում ա, դերն էտ թազա նուքյարին զուրթնըցնում ա, բիրադի քյինամ ըն հանդը։ Էս էլ մին փիս սիվիրուտկ օնրե՝ վըեր հաց ա նրստում, ծրտու մնան ղրաղավն ընցնում ա, ետ տրեռնում, օրր տասսը հետ հաց նրստում, մնամ սոված, նուքյարին ուրան նհրետ սոված թողում, պենն էլ մնամ ար խափան, տրա հետե յել վրեչ մին նոքյար քշտին վրենը չար կենում։

Վըեր քյինամ ըն հանդ, դերն էտ խաղը թազա նուքյարին կըլխեն էլ պիրում՝ մին թիքյա վըեր հաց ըն օտում, տա տրեղան լոք ա տամ եր կենում, թա օրը քյրսօր տրեռավ՝ ճելլ ըրա եր կաց, քյինանք եղնները լծենքյ, վար անենքյ։ Տա սուսուփուս դերին ասածն անում ա՝ եղենքյը լծում ըն, վար անում։ Վըեր մխրրե անց ա կենում, դերը նորը մինան ա նուքյարին ասում.—Սոված մըեռե, ետ տրեռնանք հաց օտրենքյ։ Նոքյարը եղենքյը տուս ա անում. քյինամ, վըեր մխրրե հաց օտրե, դերը էլլա յա եր կենում, ասում.—

Լավ, կերենք, քյինա՜ եզենքը պեր, լծենք, վար անենք, իրիքը-նակը մար մտավ։ Նոքյարը նորից ա եզենքը պիրում լծում, վար անում։ Դերը նորից ա ասում.— Վա՜յ, սոված մըեռե։ Նոքյարը եզենքը տուս ա անում, մին սամե տուս օնում, տինում քշտին, դերին նըհետ հաց օտում։ Դերն էլլա ուրան քյոհնա՜ խըսյաթն ա պինըցնում՝ մին էրկու թիքյա՜ հաց լըմլամում, լոք տամ եր կենում, ասում.—Մթնեց, եր կաց եզենքը պեր լծենք, վար անենք։ Նո-քյարը չգյիդալը տիրած ուրան հացն օտում ա, դերն էլ տիմանում չի, կռանում ա թա սուփրան հըվաքե, տա դերին մըրքան փըռնում ա, մին լավ սըմաթակ տամ, նստում հացն օտում, քուշտանում, եր կենում եզենքը պիրում լծում, վար անում։ Դերը մնամ ա էշ կըտ-րած։ Ախեր պայման տիրած ըն իլալ, վըեր հու ուրանց մաչին խոս-կըն օրիշ տըեղ հըսցնե, հաղզար մանեթ փող տա։ Դերը ճարը կըտ-րած, սուսուփուս վար ար անում։

Էքյսը վըեր նորըմինան կյամ ըն վըրատեղ, դերն էլլա ուրան քյոհնա՜ սիվիրուտկն ա պինըցնում՝ մին թիքյա՜ հաց ա կոլ տամ, եր կենում թա՝ լա՜վ կերենք, եր կաց եզենքը լծենք, օրը քյըսՕր տրեռավ։ Նոքյարը թա. «Ա՜ դեր, սամեն... Դերը վըխելան նհրետ լուղին կապ ա ինգյում, կըմկըմալավ ասում ա. —Ը՜, ծը, ծա՜մե քըմաատաղ, ծա՜մե...